Ընտանեկան բռնությունը և դրա կանխարգելման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Մարկոսյան Մ. Մ.
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ (Երևան, Հայաստան)
markosyanmari@mail.ru

Վճռորոշ բառեր՝ ընտանիք, ագրեսիա, բռնություն, ընտանեկան բռնություն, ընտանեկան բռնության ռիսկի խմբեր, հոգեբանական և ֆիզիկական բռնություն, անտեսում:

Семейное насилие и особенности его предупреждения в Республике Армения

Маркосян М.М.
Соискатель Института философии, социологии и права НАН РА, младший инспектор отдела предварительной профессиональной подготовки учебного центра Оброзовательного Комплекса полиции РА, старший сержант полиции (Ереван, Армения)
markosyanmari@mail.ru

Резюме: В нашем обществе постоянно растет число случаев насилия, что требует серьезных системных решений. Учитывая тот факт, что легче предупредить отрицательные явления, чем потом терпеть их опасные последствия, актуальным становится вопрос поиска путей решения проблемы семейного насилия. В статье автор рассматривает социологические особенности семейного насилия, его возможные проявления, причины, а также возможные пути его предупреждения.
Ключевые слова: семья, агрессия, насилие, семейное насилие, группы риска семейного насилия, психологическое и физическое насилие, пренебрежение.

The Domestic Violence and the Peculiarities of Its Prevention in the Repabliq of Armenia

Markosyan M.M.
Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA,junior inspector of pre -professional preparation departament of training center of the Educational Complex of police of the Republic of Armenia, police senior serjant (Yerevan, Armenia)
markosyanmari@mail.ru

Abstract: In our society the number of cases of violence is constantly increasing, which requires urgent systematic solutions.
Taking into consideration the fact that it is easier to prevent the negative influence than to bear its dangerous consequences, the issue of finding ways to solve the problem domestic of violence becomes actual.
In the article, the author refers to sociological and psychological characteristics of domestic violence, to its possible forms of expression, to its causes as well as to the ways to its prevention.
Keywords: family, aggression, domestic violence, risk groups of domestic violence, psychological and physical violence, slight.

Արժեքները, որոնց ձգտում է մարդը, գըլխավորապես որոշվում են այն խմբով, որտեղ նա սովորել է շփվել, որտեղ ձևավորվել է նրա անձը, որտեղ կառուցվել է նրա արժեհամակարգը, որի նորմերով նա գնահատել է իր գործունեությունը: Մարդու համար առաջին և առավել նշանակալի խումբը ընտանիքն է: Ընտանիքի դերը յուրաքանչյուր մարդու կյանքում չափազանց մեծ է, քանի որ նրան բնորոշ է հոգեբանական, սոցիալական, մանկավարժական ներգործության հզոր ուժը [**7**; **9**]: Այն հասարակության հիմնական ինստիտուտներից է, հետևաբար պետք է լինի պետության և հասարակության հատուկ ուշադրության առարկան:

Հայտնի է, որ ընտանիքն էական դեր է կատարում ընտանեկան արժեքների և ավանդույթների պահպանման, ինչպես նաև բացասական տարբեր երևույթների և գործընթացների կանխման գործում: Այն կարելի է դիտել

որպես ինքատիպ միկրոպետություն, որտեղ գործում են դաստիարակության առանձին համակարգեր: Հետևաբար, ինչքան շատ նյութական, մշակութային և այլ հնարավորություններ ստեղծվեն ընտանիքի նորմալ կենսագործունեության համար, այնքան ավելի բարձր կլինի ընտանեկան բռնության կանխման մակարդակն և արդյունավետությունը:

Ընտանեկան բռնությունը ընտանիքի մի անդամի կողմից մյուս անդամի նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բնույթի բռնի ներգործություն կամ դրա սպառնալիք է [**2**; **5**; **11**]:

Այսպես, դեռևս 2007թ "Թուրփանջյան" հասարակական հետազոտությունների կենտրոնի իրականացրած "Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն և ճնշումը Հայաստանում" ազգային հարցման արդյունքների՝ Հայաստանի կանանց 27 տոկոսը ենթարկվել է ոչ ծանր ֆիզիկական ճնշման: Ինչ վերաբերվում է հոգեբանական բռնությանը, ապա Հայաստանի կանանց 66 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ճնշման, որի 64 տոկոսի բռնարարներն ամուսնիններն են [**3**]: Համեմատության մեջ դնելով ներկայիս վիճակագրական տվյալների հետ, կարելի է փաստել խնդրի արդիականությունը և նրա բացասական հետևանքները վերացնելու անհրաժեշտությունը:

Անհերքելի է, որ ընտանեկան կոնֆլիկտներն ամենաբացասական ազդեցությունն են թողնում աճող սերդնի դաստիարակության վրա: Ժամանակակից Հայաստանում լայնորեն տարածվել են երեխաների ընտանիքներից հեռանալու, թափառաշրջիկությամբ զբաղվելու և հանցավոր գործունեության մեջ ներգրավելու դեպքերը [**1**]:

Արևմտյան հետազոտող Զ.Ուոլկերը նկարագրում է ընտանեկան բռնության 3 փուլ, որոնք կարող են ունենալ տարբեր տևողություն:

Առաջին փուլը դա լարվածության աճի փուլն է: Լարվածությունն և ագրեսիան լցնում են սպասվող բռնության տեսարանի մասնակիցների հոգեբանական միջավայրը:

Մի դեպքում այն կարող է տևել մի քանի ժամ, մի քանի օր, այլ դեպքերում `ամիսներ և տարիներ:

Երկրորդ փուլը պայթունի փուլն է: Բռնարարը լիցքաթափվում է, իրեն թույլ տալով ագրեսիայի դրսևորումներ, զոհի հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնություն: Բռնության այս փուլը կարող է տևել մի քանի ժամից մինչև մի քանի օր:

Երրորդ փուլը "սիրո վերադարձի" կամ "մեղրամսի" փուլն է: Բռնարարը հանգստանում է, զղջում է իր արարքի համար և խոստանում այլևս նման կերպ չվարվել [**4**]:

Ի տարբերություն բռնության այլ ձևերի՝ ընտանեկան բռնությունն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- Ընտանեկան բռնությունը տեղի է ունենում մարդկանց միջև, ովքեր մտերիմ հարաբերությունների մեջ են և հիմնականում հուզականորեն և ֆիզիկապես կախված են միմյանցից: Որպես կանոն, ընտանեկան բռնության երկու կողմերն էլ պատահածը թաքցնում, գաղտնի են պահում շրջապատից:
- Տուժողի և բռնարարի միջև եղած մտերիմ հարաբերությունները նվազեցնում են տուժողի արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունը: Հարաբերությունների կայունության և բարդության պատճառով տուժողի համար դժվար է բաժանվել բռնարարից: Հնարավոր է, որ զոհը բռնարարից երեխաներ ունենա կամ ֆինանսական կախվածության մեջ լինի:
- Եթե ընտանիքում բռնություն է տեղի ունեցել, ապա հավանականությունը մեծ է, որ այն նորից կկրկնվի:
- Բռնարարի կարծիքով՝ դա որոշակի նպատակի հասնելու ամենաարագ, արդյունավետ և նվազագույն ջանքերը պահանջող միջոցն է:

Ընտանեկան բռնության դրսևորումները կարելի է առանձնացնել՝ ելնելով բռնության զոհի հատկանիշներից (կնոջ, երեխայի, մեծահասակի) հանդեպ և դրսևորման ձևից՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական և անտեսում:

Ֆիզիկական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ցավ պատճառելը:

Պարբերական բնույթ կրող ֆիզիկական բռնությունը կարելի է հայնտաբերել անձի վարքագծային առանձնահատկություններից, օրինակ՝

- Վնասվածքների պատճառը թաքցնելու ձգտումը
- Հաճախակի լացելը, ընկերների բացակայությունը
- Ագրեսիվությունը,
- Կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքը:

Հիմնախնդրի հաղթահարման կարևոր և առաջնային քայլերից է հասարակության իրավագիտակցության իրազեկման բարձրացման և իրավունքների մասին պատկերացում կազմելու միջոցառումների իրականացումը, որ ընտանեկան բռնությունը համարվում է ոչ թե կենցաղի անբաժանելի մասնիկը, այլ հանցավոր գործունեություն:

Եթե խոսենք բռնության բովանդակության համատեքստում բռնության պատճառների մասին, ապա ֆիզիկական բռնության պատճառները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

Տղամարդու անձի ձևավորման և կնոջ անձի ձևավորման առանձնահատկություններով:

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների սկզբունքը համարվում է սոցիալական արդարության հասնելու, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և երկրի կայուն զարգացման երաշխիք: Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները և հավասար հնարավորություններն ապահովելու և խտրականությունը կանխելու նպատակով անհրաժեշտ է ընդունվեն և լայնորեն կիրառվեն ռազմավարություններ, ինչպես նաև այնպիսի մեխանիզմներ և գործիքներ, որոնք հնարավորություն կտան գնահատել վերջիններիս հավասար իրավունքների և հնարավորությունների փաստացի իրավիճակը, առաջադրել դրանց լուծման հնարավոր ուղիները:[1]

Սեռական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ: Սեռական բռնության ենթարկված լինելու մասին կարող են վկայել այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝

- Գիշերային սարսափները
- Սեփական մարմինը ամբողջությամբ ծածկելու ձգտումը
- Դեպրեսիան

Հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Հոգեբանական բռնության ենթարկված լինելու մասին կարող են վկայել այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝

- Մշտական տխուր տեսքը
- Տարբեր հոգեկան խանգարումները
- Տագնապայնությունը
- Ագրեսիվությունը
- Մեկուսացվածությունը

Տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

Անտեսում՝ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք), իսկ չափահաս աշխա-

[1] Տես Գենդերային քաղաքականության 2011-2015թթ ռազմավարական ծրագրի և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ ազգային ծրագրի իրականացման զեկույց;

տունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք, բժշկական օգնություն) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ անօրինական ներկայացուցիչ կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:[2]

Ինչ վերաբերվում է երեխայի հանդեպ բռնությանը, ապա տարբերում են երեխայի նկատմամբ բռնության 4 ձև՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և երեխայի հիմնական պահանջմունքների անտեսումը:

Ընտանեկան բռնության պատճառները բազմաթիվ են և դրա համար էլ ընդունված է ընտանեկան բռնության պատճառները դիտարկել իրենց համակցության մեջ: Մարդկային հասարակությունը արդեն վաղուց համոզվել է, որ բացասական ցանկացած երևույթ կանխելը միշտ ավելի արդյունավետ և նպատակահարմար է, քան հաջորդող վերականգնողական աշխատանքի իրականացումը (հիվանդության բուժումը, հանցագործության համար պատժելը) և այլ:

Ըստ ոստիկանության վիճակագրական տվյալների՝ ՀՀ–ում ընտանեկան բռնությունների թիվը 2010-2018թթ ունի հետևյալ պատկերը (աղյուսակ 1).

Վեր հանելով ոստիկանության տրամադրած վիճակագրության տվյալները 2010-2018 թթ, կարելի է անել այն եզրահանգումը, որ խնդրի ուսումնասիրումը և համակարգային միջոցառումները դառնում են հրատապ:

Բռնության կատարման պատճառները թերևս առանձին ուսումնասիրության անհրաժեշտություն են պահանջում:

Ընտանեկան բռնության կանխում ասելով պետք է հասկանալ ընտանեկան բռնության զոհերին բռնարարքներից պահպանելը, զերծ պահելը: Ընտանեկան բռնության կանխման գործընթացը բազմաթիվ և բազմաբովանդակ միջոցառումների մի բարդ համակարգ է, որը գործի է դրվում բացասական այդ երևույթը տեղայնացնելու, հսկելի դարձնելու և որոշակի սահմաններում պահելու, այլ ոչ թե այն ի սպառ վերացնելու, արմատախիլ անելու նպատակով: Այսինքն՝ ընտանեկան բռնության կանխմանն ուղղված գործունեությունը ենթադրում է փոխկապակցված և նպատակային այնպիսի միջոցառումների մշակում և իրականացում, որոնք անհրաժեշտ և բավարար են բռնարարքներ կատարելու պատճառների և նպաստող պայմանների վրա դրականորեն ներգործելու կամ դրանց առաջացմանը խոչընդոտելու համար:

Քանի որ ընտանեկան բռնությունը սոցիալական երևույթ է, ապա դրա կանխման հիմնական դերը ևս պետք է հատկացվի նպատակային և ընդհանուր կանխմանը [**8**]: Դրանք բոլորն էլ նախ և առաջ պետք է ուղղված լինեն մարդկանց կենսապայմանների էական բարելավմանը, քաղաքացիների իրավագիտակցության, ինչպես նաև բնակչության տարբեր շերտերի կուլտուրայի և կրթության մակարդակի բարձրացմանը: Ինչ վերաբերվում է գաղափարախոսական բնույթի միջոցառումներին, ապա ընտանեկան բռնության կանխումը տվյալ դեպքում իրականացվում է դաստիարակչական, կրթական և մշակութային որոշակի միջոցառումների կիրառման միջոցով [**6**]: Ընտանեկան բռնությունների կանխման գործում անհամեմատելի մեծ դեր պետք է խաղան զանգվածային լրատվամիջոցները: Անհրաժեշտ է մշակել հեռուստանախագծեր, որոնք ուղղված կլինեն իրավական գրագիտության մակարդակի բարձրացմանը: Ներկայումս ցուցադրվող բռնության, դաժանության տեսարանների փոխարեն հանրությանը մատուցեն բարոյական արժեքներ, ավելացնեն քարոզչական, ուսուցողական հաղորդումների թիվը, ստեղծեն ընտանիքի արժեքները արմատավորող հեռուստանախագծեր: Ընտանեկան բռնության կանխարգելման տեսանկյունից անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ընտանիքի վերականգնողական դե-

[2]Տես https://www.arlis.am/documentView.aspx?docID=118672

Աղյուսակ 1. Ըստ ոստիկանության վիճակագրական տվյալների՝ ՀՀ–ում ընտանեկան բռնությունների թիվը 2010-2018թթ

Մարզ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ք.Երևան	191	273	302	284	196	305	153	280	258
Արագածոտն	12	19	33	20	25	27	13	25	21
Արարատ	52	77	74	86	75	77	47	88	77
Արմավիր	18	39	53	60	78	62	34	65	51
Գեղարքունիք	22	39	49	45	48	51	34	49	36
Լոռի	39	56	72	48	51	47	38	52	57
Կոտայք	32	57	68	75	71	84	45	57	74
Շիրակ	47	90	71	67	95	80	48	112	79
Սյունիք	13	16	29	21	26	28	26	35	27
Վայոց Ձոր	4	7	5	10	5	11	8	3	8
Տավուշ	10	10	16	18	18	23	7	28	19
ընդամենը	440	683	772	734	688	795	453	794	707

րի ամրապնդմանը: Այսօրվա դրությամբ հայկական ընտանիքների հիմնական մասը ունակ չէ պաշտպանել իր անդամներին և վերականգնել նրանց նորմալ հոգեվիճակը: Դա բացատրվում է մարդկանց նյութական ծանր կացությամբ և բազմաթիվ կարիքների առկայությամբ: Իր ընտանիքի գոյության համար նվազագույն կենսական պահանջներ ապահովելու անկարողությունն արժեզրկում է մարդուն, հատկապես տղամարդուն նվաստացնում նրան, բացասաբար ազդում վերջինիս սոցիալական կարգավիճակին և հոգեկան աշխարհին: Սա էլ հանգեցնում է ընտանիքի հոր հեղինակազրկմանը, նվազագույնի է հասցվում հոր դերը երեխաների դաստիարակության և ընտանիքի նյութական ապահովման գործում: Դա է պատճառը, որ շատերն իրենց հոգսերը մոռանալու նպատակով սկսում են զբաղվել հարբեցողությամ, խորտակվում օղու շշի մեջ: Նշված հանգամանքներն էլ մեր կարծիքով ընտանեակենցաղային հողի վրա հարբացության վիճակում գտնվող տղամարդկանց կողմից կատարվող բռնարարքների հիմնական պատճառներն են [**10**]: Այս պարագայում բարեկամների և հարազատների մասնակցությունը չափազանց կարևորվում է: Սակայն այստեղ էլ սա չպետք է անցնի սահմանը՝ սահմանապակվելով նյութական օգնությամբ և առանց խառնվելու ընտանիքի ղեկավարման հարցերին:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի միջազգային փորձը ցույց է տվել, որ պետական իշխանության և ոչ մի մարմին, կանխարգելիչ և ոչ մի միջոցառում ունակ չեն հասնելու վերջնական հաջողության, եթե չհիմնվեն հասարակության ամենատարբեր կառույցների աջակցության օժանդակության վրա: Ընտանիքում բռնությունների կանխման գործում անչափ մեծ նշանակություն ունի ծնողների մոտ տարրական մանկավարժական հմտությունների ձևավորումը և ամրապնդումը: Մասնավորապես, շատ կարևոր է երեխայի դաստիարակության մեթոդների և ձևերի մեջ ընտրություն կատարելիս հաշվի առնել, որ ծնողը կարող է և պետք է սեր և հարգանք դրսևորի երեխայի հանդեպ՝

- Բացատրելով, թե ինչպես պետք է արվի ինչ-որ բան և ոչ թե ինչու պետք է արվի հենց այդ ձևով,
- Լսելով երեխայի մտքերն և հարցերը և համբերատար ու անկեղծ պատասխանելով դրանց,
- Երեխային հարգալից վերաբերվելով,
- Փորձելով գտնել, թե երեխայի նման պահվածքի համար ինչ պատճառ կա,
- Գտնելով պատժելու այլ տարբերակներ՝ ծեծելու կամ վիրավորելու փոխարեն [**2**]:

Հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով մեծածավալ աշխատանքի կարիք կա, քանի որ կատարված աշխատանքի արդյունքում ընտանեկան բռնության վիճակագրությունը և հանրային վերաբերմունքը դեռևս ձևավորված չէ: Չնայած կատարված աշխատանքներին իրազեկվածության մակարդակն առկա ծառայությունների առումով մնում է անբավարար:[1]

Ամփոփում: Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումները պետք է ավելի շատ գաղափարախոսական ուղղվածություն ունենան: Առաջին հերթին յուրաքանչյուր անհատ պիտի ճիշտ ընկալի ընտանիք կառույցը, հատուկ ուշադրություն դարձնելով դաստիարակությանը դեռ վաղ մանկական տարիքից՝ սեռրմանելով հոգևոր և բարոյական արժեքների: Այնուհետև բարելավվեն կենսական-տնտեսական պայմաններն, բարձրացվի իրազեկվածությունն, վերացվի գենդերային խտրականությունը, ապահովվի ընտանիքում սոցիալ- տնտեսական կայունությունն:

Բռնարարքների դեմ պայքարելու անմիջական նպատակ չի հետապնդում նաև բնակչության շրջանում հոգևոր մշակույթի զարգացումը, բայց դա կնպաստի մարդկանց դրական հայացքների և բարքերի ձևավորմանն: Կարևորագույն քայլերից պետք է դառնա հասարակության օրենսդրահիրավական դաշտի հստակեցումը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցների հետ համագործակցությունը (ոստիկանությունը, կրթության ոլորտի լիազոր գործադիր մարմինը, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ապաստարանները) և այլը՝ հաշվի առնելով և՛ օրենքը, և՛ սոցիալական նորմերը:

[1] Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված Որակական հետազոտություն, Երևան 2017

Օգտագործված գրականության ցանկ

1. **Առաքելյան Ս.Վ.**,Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից, Երևան, 2001, էջ 34:
2. Երեխաների պաշտպանությունը բռնությունից, “Save the children” կազմ., Դասընթացի նյութեր, “Ասողիկ” հրատ., Երևան,2011
3. **Կարապետյան Ծ.**, Ընտանեկան բռնություն, Ձեռնարկ ոստիկանների համար, Երևան, 2010, էջ 5:
4. **Бэрон Р. Ричардсон Д.** Агрессия. -СПб.: Питер, 2000
5. **Конт Р.** Сексуальное насилие над детьми // Энциклопедия социальной работы, в 3 т., Т.3, -М.,1994
6. **Либоракиной М.И., Шапиро Б.Ю., и др.** – М.: ЗАО «Редакционно-издательский комплекс Русанова», 1999
7. **Москаленко В.Д.** Программа социальной работы с семьями больных алкоголизмом. — М.: Центр общечеловеческих ценностей
8. **Сидоренко Т.А, Максудов Р.Р.** Комплексный подход к защите от насилия в семье // Социальные работники за безопасность в семье / Под ред.
9. **Стар Б.** Насилие в семье // Энциклопедия социальной работы, в 3 т., Т2. – М.,1994,
10. **Тащёва А.И.**, Зелинская С.Ю. Насилие в алкогольной семье. / Психологический вестник
11. **Хасина А**. Женщины, домашнее насилие, стресс. // Насилие и социальные изменения. – №2. – 2000.

Сдана/Հանձնվել է՝ 15.10.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 17.12.2019
Принята/Ընդունվել է՝ 20.12.2019